

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____

թ. _____

« _____ » _____ 20__ թ.

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ, այսուհետ՝ «Դիլեր», ի դեմս՝ _____

/նշել անունը, ազգանունը, պաշտոնը/

որը գործում է _____

/նշել հիմքը՝ կանոնադրության, լիազորագրի կամ այլնի/

հիման վրա մի կողմից, _____

/նշել կազմակերպության անվանումը, ֆիզիկական անձի ազգանունը, անունը/

այսուհետ՝ «Հաճախորդ», ի դեմս _____

/նշել պաշտոնը, անունը, ազգանունը/

որը գործում է _____

/նշել հիմքը՝ կանոնադրության, լիազորագրի կամ այլնի/

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

ՆԱԽԱԲԱՆ

Սույն պայմանագիրը կնքվում է կողմերի միջև նպատակ ունենալով կարգավորել Դիլերի և Հաճախորդի միջև հարաբերությունները Պետական պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման ոլորտում: Սույն պայմանագրում օգտագործված հասկացությունները պետք է մեկնաբանվեն համաձայն ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 3-ին ընդունված N 1103-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, թերտեղաբաշխված պարտատոմսերի տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման կազմակերպման», Հայաստանի Հանրապետության Պետական (Գանձապետական) կարծաժամկետո պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման», «Հայաստանի Հանրապետության Պետական (Գանձապետական) միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման», «Հայաստանի Հանրապետության Պետական (Գանձապետական) միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման», Պետական (Գանձապետական) երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման» կարգեր»-ում /այսուհետ՝ Կարգ/ զետեղված հասկացությունների և սահմանումների:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՒՐԿԱՆ

Դիլերը՝ համաձայն Կարգի և սույն պայմանագրի, Հաճախորդի համար բացում է դեպո հաշիվ և իրականացնում է Հաճախորդին պատկանող ՀՀ Պետական պարտատոմսերի /այսուհետ՝ պարտատոմսեր/ դեպո հաշվի սպասարկումը:

1.1 Դիլերը պարտավորվում է Հաճախորդի հանձնարարությամբ, վարձատրությամբ, իր անունից, սակայն Հաճախորդի հաշվին մասնակցել Պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման

աճուրդներին, իրականացնել սույն պայմանագրերի անբաժան մաս կազմող Պահառության գործունեության հիմնական պայմաններով սահմանված հանձնարարականների իրականացումը:

1.2 Պարտատոմսերի թողարկման համարը, ծավալը, գինը, և այլ պայմանները նշվում են Հաճախորդի կողմից ներկայացված համապատասխան Պահառության գործունեության հիմնական պայմաններով սահմանված հայտում:

1.3 Հաճախորդի համար Դիլերի կողմից ձեռք բերած պարտատոմսերը հանդիսանում են Հաճախորդի սեփականությունը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Դիլերը պարտավորվում է՝

2.1.1 Որպես ենթապահառուն, Ներդրողի անունով բացել N 24700 _____ դեպո հաշիվ ազատ արժեթղթերի համար, 24700 _____ գրավադրված արժեթղթերի համար, և 24700 _____ արգելադրված արժեթղթերի համար՝ Հաճախորդին պատկանող կամ հօգուտ Հաճախորդի գրավադրված Պարտատոմսերի հաշվառման նպատակով:

2.1.2 Հաճախորդի դեպո հաշվը չի հանդիսանում առևտրային գաղտնիք և պարտադիր պետք է նշվի Պարտատոմսերի հետ կատարվող գործարքներում և բոլոր հաշվարկային փաստաթղթերում:

2.1.3 Հաճախորդի կողմից ներկայացված հայտերով ձեռք բերված պարտատոմսերը մեկ բանկային օրվա ընթացքում փոխանցել Դիլերի մոտ գտնվող Հաճախորդին պատկանող դեպո հաշվին և դրանք չօգտագործել այլ նպատակներով, եթե Հաճախորդն այլ տեսակի գործողություն կատարելու հայտ չի ներկայացրել:

2.1.4 Հաճախորդի կողմից ներկայացված պարտատոմսերի ձեռք բերման հայտը չբավարարվելու դեպքում, Հաճախորդի կողմից դեպոնացված ամբողջ գումարը, հայտը ուժը կորցնելու ժամկետից հետո, մեկ բանկային օրվա ընթացքում փոխանցել Դիլերի մոտ գտնվող Հաճախորդի բանկային հաշվին կամ Հաճախորդի կողմից ներկայացված վճարման հանձնարարականի հիման վրա մեկ այլ բանկային հաշվին կամ կանխիկ տրամադրել նրան:

2.1.5. Հաճախորդի կողմից ներկայացված հայտը չբավարարվելու դեպքում երկու բանկային օրվա ընթացքում հեռախոսով, ֆաքսով կամ էլեկտրոնային կապի միջոցով Հաճախորդին ծանուցել նրա առաջարկած պայմաններով գործարքների կնքմանը խոչընդոտող չնախատեսված հանգամանքների առկայության մասին:

2.1.6. Հաճախորդի կողմից ներկայացված պարտատոմսերի ձեռք բերման կամ օտարման հայտի հիման վրա գործարքը կնքելու պահից 1 /մեկ/ բանկային օրվա ընթացքում Հաճախորդին ծանուցել կնքված գործարքի մասին:

2.1.7. Պարտատոմսերի հետ կապված ցանկացած տեսակի գործարք իրականացնելու դեպքում Հաճախորդի պահանջով գործարքը իրականացնելու պահից մեկ բանկային օրվա ընթացքում Հաճախորդին ներկայացնել դեպո հաշվից քաղվածք և տեղեկանք կատարված գործառնությունների վերաբերյալ:

2.1.8. Երեք օրվա ընթացքում Հաճախորդին ներկայացված դեպո հաշվի քաղվածքի կամ կատարված գործառնությունների մասին տեղեկանքի վերաբերյալ գրավոր առարկություններ չլինելու դեպքում դեպո հաշվի քաղվածքը կամ տեղեկանքը Դիլերի կողմից համարվում է ընդունված, իսկ գործարքը պատշաճորեն կատարված:

2.1.9. Պարտատոմսերի Թողարկողի կողմից պարտատոմսերը մարելու դեպքում Հաճախորդին ապահովել մարված պարտատոմսերի գումարի տրամադրումը փաստացի մարման օրվանից մեկ բանկային օր հետո:

2.2 Դիլերը իրավունք ունի՝

2.2.1. Մերժել Հաճախորդի կողմից ներկայացված հայտը, եթե այն չի ներկայացվել ժամանակին և Պահառության գործունեության հիմնական պայմաններով և Կարգով սահմանված կարգով և վավերապայմաններով կամ չի ապահովվել գործարքի կատարման համար անհրաժեշտ գումարի դեպոնացումը:

2.2.2. Հայտը բավարարելուց առաջ կամ հետո Հաճախորդից գանձել միջնորդավճար՝ համաձայն Պահառության գործունեության հիմնական պայմանների:

2.3 Հաճախորդը պարտավորվում է՝

2.3.1. Դիլերից ընդունել հանձնարարությամբ կատարված գործողությունների արդյունքում ամբողջ կատարվածը դեպո հաշվից քաղվածքի տեսքով, ինչպես նաև ձեռք բերել դեպո հաշվում հաշվառվող պարտատոմսերի նկատմամբ բոլոր իրավունքները և պարտավորությունները:

2.3.2. Ձևնել իր կողմից և իր օգտին հանձնարարության հիման վրա Դիլերի կողմից կատարված գործողությունները արտացոլող դեպո հաշվից քաղվածքը և դրանում թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնել Դիլերին:

2.3.3. Դիլերին ազատել երրորդ անձանց առջև հանձնարարությունը կատարելու նպատակով իր վրա ստանձնած պարտականություններից:

2.3.4. Պարտատոմսերի առքի հայտ ներկայացնելու դեպքում նախապես Հաճախորդի ապահովել /դեպոնացնել/ պարտատոմսերի գնման համար անհրաժեշտ դրամական գումարը:

2.3.5. Յուրաքանչյուր գործարքի համար մինչև հայտի ներկայացումը ապահովել միջնորդավճարի վճարումը:

2.3.6. Գործարքների իրականացման համար Դիլերին ներկայացնել պարտատոմսերով գործարքներ իրականացնելու համար համապատասխան հայտեր կամ հանձնարարականներ (ըստ Պահառության գործունեության հիմնական պայմանների ձևերի):

2.3.7. Գնման հայտերի ներկայացման դեպքում նախորոք ապահովել գործարքի կատարման համար անհրաժեշտ ամբողջ գումարը և միջնորդավճարը:

2.3.8. Դիլերին վճարել միջնորդավճար՝ միջնորդային գործարքների համար՝ համաձայն Դիլերի կողմից սահմանված սակագների:

2.4 Հաճախորդն իրավունք ունի՝

2.4.1. Ներկայացնել Պահառության գործունեության հիմնական պայմաններով նախատեսված պարտատոմսերի համապատասխան գնման, վաճառքի հայտեր կամ հանձնարարականներ:

2.4.2 Առաջնային շուկայից պարտատոմսերի գնման հայտերում ներկայացնել համապատասխան առաջարկություններ Պահառության գործունեության հիմնական պայմաններով սահմանված ձևով:

2.4.3 Դեպո հաշվի յուրաքանչյուր փոփոխության դեպքում պահանջել քաղվածք իր հաշվից և Տեղեկանք կատարված գործառնությունների վերաբերյալ:

2.4.4. Պարտատոմսերի թողարկողի կողմից պարտատոմսերը մարելու դեպքում Դիլերից պահանջել ապահովել մարված պարտատոմսերի գումարի տրամադրումը փաստացի մարումից մեկ բանկային օր հետո:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒՇՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ լրիվ կատարման դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում համաձայն գործող օրենսդրության և սույն պայմանագրի:

3.2. Հաշվարկների ժամկետների խախտման դեպքում, խախտող կողմը վճարում է մյուս կողմին տույժ՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար վճարվելիք գումարի 0,15% չափով:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

4.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, պարտատոմսերի շուկայում էական փոփոխությունները և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ օրից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դադարեցնել սույն պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և ուժի մեջ է կողմերից մեկի նախաձեռնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտադիր դրույթների պահանջով այն դադարեցնելը: Կողմերը պարտավոր են նախապես՝ 7 օր առաջ տեղյակ պահել հակառակ կողմին սույն պայմանագիրը դադարեցնելու մասին:

5.2. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև պայմանագրի շուրջ իրականացվող նամակագրությունը իրավաբանական նշանակություն ունեն միայն գրավոր ձևով լինելու դեպքում: Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները ուժի մեջ են մտնում միայն կողմերի միջև կնքված լինելու դեպքում:

5.3. Սույն պայմանագրի անբաժան մաս են կազմում Պահառության գործունեության հիմնական պայմանները:

5.4. Սույն պայմանագիրը կազմված և ստորագրված հայերեն լեզվով երկու օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմին, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ դատական եղանակով:

Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

Հաճախորդ

Դիլեր

_____ /բանկային վավերապայմանները/

_____ /ստորագրություն/

_____ /ստորագրություն/

Կ.Տ.

Կ.Տ.

Եթե կողմը քաղաքացի է, ապա՝ _____

_____ /ազգանունը, անունը, հայրանունը, հասցեն, անձնագրի սերիան, Ե՞րբ և ո՞ւմ կողմից է տրվել/